«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը. Ինքնաստուգում և ինքնավերահսկում

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Գալստյան

Ուսումնական հաստատություն՝ 140 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..…...3

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը և ձևերը……5

1.2. Ինքնուրույն աշխատանքները սովորողների հետ արդյունավետ կազմակերպելու ուղիները……...……6

1.3. Ուսուցիչների դերը աշակերտների ինքնուրույնության զարգացմանը առարկայի դասավանդման ընթացքում……9

ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2.1. Ինքնուրույն և նախաձեռնող աշակերտի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում…….…….……11

2.2. Ինչպե՞ս իրականացնել ինքնաստուգում և ինքնավերահսկում……13

2.3. Դասի պլան……...……16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…...21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն սովորողների կրթամակարդակը բարձրացնելն է, այլև նրանց գիտելիքները ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու, հետազոտելու կարողություններ ձևավորելը: Հետազոտական մտածողության գործընթացը ենթադրում է ինչպես նորի որոնումը, այնպես էլ արդեն ձեռք բերած գիտելիքների գործածումը: Ցանկացած հետազոտական աշխատանք որոնողական քայլերի շղթա է, որի հաջողությունը պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորումից:

Կրթությունը, ըստ հանրակրթական պետական չափորոշչի, ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժա-հոգեբանական աշխատանքները, մշակութային, բարոյական, ազգային ու համամարդկային արժեքները: Ժամանակակից մանկավարժության մեջ կրթության առաջնային նպատակ է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և սովորելու մշակույթ դաստիարակելը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Արդի կրթական համակարգում, ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողներին՝ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորումը:

Ուստի մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը ուսուցման գործընթացն աշակերտներին պետք է <u>ինքնադրսևորման</u> և <u>ինքնազարգացման</u> հնարավորություն ընձեռնի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնասիրության ընթացքում ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցով: Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սատարելով

հանդերձ, պետք է աշակերտին՝ աննկատ ու անձայն հուշի. «Փորձի՛ր ինքնուրույն հաղթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»: Մինչդեռ այսօրվա մեր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա է սովորողների ինքնուրույն գործունեություն ծավալելու կամ իրենց գործունեությունն ինքնուրույն կարգավորելու կարողությունների խնդիրը:

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը:</u> Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը դպրոցում: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

<u>Հետազոտության խնդիրները:</u> Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ներկայացնել սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը:
- Պարզաբանել ինքնուրույն և նախաձեռնող աշակերտի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում:
- Լուսաբանել ինչպե՞ս իրականացնել ինքնաստուգում և ինքնավերահսկում:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը և ձևերը

Ա. Ի. Սավենկովն ասել է, որ ուսուցումը պետք է լինի պրոբլեմային: Այն պետք է պարունակի ինքնուրույն հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը: Այդ դեպքում կրթությունը ոչ թե սոսկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության: Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվեն դրական կենսափորձ ու անձնային նոր որակներ:

«Երեխայի վզին փաթաթած» թեման, ինչքան էլ մեզ՝ մեծերիս կարևոր թվա, անհրաժեշտ արդյունք չի ունենա: Երեխային հետաքրքրող թեմա ընտրելու համար հարկավոր է նրան լսել, ուսումնասիրել նրա հետաքրքրությունները: Դա բարդ, սակայն լրիվ իրագործելի մանկավարժական խնդիր է: Հետազոտական աշխատանքը պետք է սկսել առաջին դասարանից: Դրանք կարելի է զարգացնել խաղերի տարաբնույթ աշխատանքների միջոցով, որոնք կակտիվացնեն երեխաների ստեղծագործական գործունեությունը:

Ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի դպրոցում: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները ինքնին չեն ձևավորվում, դրանք անհրաժեշտ է ձևավորել: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները հստակ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի մասնակցության: Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել ինքնուրույն աշխատանքի հմտություններ: Այդ գործում մեծ դեր ունի ուսուցիչը, քանի որ սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ դասից դաս, դասարանից դասարան[1]:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այս տեսակ հաշվառումն ուսուցման գործընթացում անհրաժեշտ պայման է կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ

[1] Էսիպով Բ.Պ., Սովորողների ինքնուրույն աշխատանքը դասին. - Մ., 1961:

ապահովելու համար: Օրինակ, հայտնի է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է, եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Ժամանակակից դպրոցում սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է երեք ձևով.

1. Համընդհանուր
2. Անհատական
3. Խմբային:

1.2. Ինքնուրույն աշխատանքները սովորողների հետ արդյունավետ կազմակերպելու ուղիները

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է բավականին վաղ տարիքում: Աշակերտների ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը բարելավում է ուսուցման գործընթացը, որն ունի ուսուցիչների և սովորողների առջև դրված խնդիրների լուծման համատեղ ելքեր, որոնք կիրառվում են կրթության որակը բարելավելու նպատակով: Աշակերտների ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը կրթության բարելավման և բարեփոխումների փուլում առավել արդիական է, տեղեկությունների հավաքման գործընթացի անբաժանելի մասն է: Երեխայի ինքնուրույնությունը արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում՝ ինքնասպասարկում, խաղեր, մշակութահիգենիկ, հանրօգուտ գործունեություն, շրջապատի հետ շփումներ և այլն: Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում տարրական աշխատանքային գործողություններին: Դեռ ավելին, աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը և աշխատանքային հանձնարարություններ կատարելու պահանջմունքը ձևավորվում են մանկական ինքնուրույնության շրջանակներում:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է որոշակի փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իրենց ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը:
5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անդրադարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում: Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական հնարներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին[2]: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին: Դիտարկենք, թե ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է կիրառել դպրոցում: Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից: Ստորև ներկայացնենք ինքնուրույն աշխատանքի տեսակները.

[2] Նեմով Ռ.Ս. Հոգեբանություն,Գիրք 2,1998:

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
3. Գիտելիքները համակարգող
4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող։

Կրթության բարելավման հարցերը մշտապես գտնվել են բոլոր զարգացած երկրների ուշադրության կենտրոնում։Բարելավման միջոցներից է ինքնուրույն աշխատանքների արդյունավետ կիրառումը։Աշակերտների ինքնուրույն աշխատանքը առաջին հերթին նրանց ինքնուրույն մտածողությունն է, որը դրսևորվում է աշակերտակենտրոն, արդյունավետ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառության ժամանակ։ Ի՞նչ ընդհանրացում կարող եք կատարել։ Առաջադրանքը կատարելիս հետևություններ են անում՝ նախ անհատապես աշխատելով, ապա ստուգում են իրենց ստացած արդյունքը։

1.3. Ուսուցիչների դերը աշակերտների ինքնուրույնության զարգացմանը առարկայի դասավանդման ընթացքում

Իսկ հիմա դիտարկենք կերպարվեստ առարկայի դերը սովորողների մեջ ստեղծագործականության, ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորման գործընթացում։ Կերպարվեստ առարկայի կարևոր առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ այն կապ է հաստատում մարդու և բնության, ինչպես նաև բնագիտական և հասարակական առարկաների միջև։ Կերպարվեստ առարկայի շնորհիվ աշակերտները ոչ միայն գիտելիքներ է ձեռք բերում բնություն վերաբերյալ, այլ նաև վերաբերմունք և արժեհամակարգ։ դպրոցական կրթություն բովանդակությունը ներկայումս ընդգրկում է ոչ միայն գիտելիքներ եվ կարողություններ այլ նաև ստեղծագործական գործունեության փորձ և հուզարժեքային վերաբերմունք շրջակա աշխարհի նկատմամբ։ Այս ամենի կրողն ու ձևավորողը անշուշտ ուսուցիչն է։ Բազմաթիվ հոգեբանական խնդիրներ կենտրոնանում են ուսուցչի շուրջ։ նրա վերաբերմունքը դեպի աշակերտը երեխայի հոգու վրա ունեցած

ներգործությունը մի կողմի իր սեփական աճն ու զարգացումը ստեղծում են հոգեբանական մի բարդ համակարգ, որի բաղադրամասերը ձևավորում են ուսուցչի կերպարը[3]: Այդ բաղադրիչներն են՝

1. մանկավարժական ուղղվածություն
2. մանկավարժական իրազեկություն
3. Հուզական ճկունություն:

Իրենց բովանդակության և յուրահատկության շնորհիվ արվեստներն ընդհարապես և կերպարվեստը՝ հատկապես, լավագույն կերպով բացահայտում են մարդու և շրջապատող ողջ աշխարհի գեղեցկությունն ու ներդաշանակությունը: Իսկ գեղեցիկը, ներդաշնակը տեսնելու պահանջը վերածվում է այն ստեղծելու ցանկության: Արվեստի հետ շփումը հարստացնում է մարդուն գեղեցիկի, բարության, ճշմարտության, ճանաչման համամարդկային փորձով՝ դարձնելով այն սեփական կյանքի փորձ:
Ինքնուրույնության ձևավորման համար անհրաժեշտ է կիրառել դաստիարակչական-կրթական աշխատանքի ամբողջական համակարգ: Աշխատանքային նյութերը պետք է ընտրված լինեն այնպես, որպեսզի դրանք շահագրգռվածություն առաջացնեն նախկինում ստացած գիտելիքները և հմտությունները կիրառելու համար: Ինքնուրույնության ձևավորման արդյունավետությունը կախված է խմբերում ընկերական գործնական մթնոլորտից և հատկապես ուսուցչից: Ուսուցչի խոսքը պետք է լինի հանգիստ, առանց ավելորդ բառերի՝ երեխաներից ակնկալելով ուշադրություն, ուսուցչի յուրաքանչյուր խոսքին արձագանքելու սովորություն: Ուսուցչի մեղմ խոսքը նպաստում է, որ երեխաները հաճույքով մասնակցեն ցանկացած գործունեությյան, ինչն էլ իր հերթին հեշտացնում է գիտելիքների և ունակություններ յուրացմանը: Ինքնուրույնության ձևավորումն իրականացվում է ուսուցչի և երեխաների ակտիվ փոխգործակցության պայմաններում:

[3] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, 2013թ.:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2.1. Ինքնուրույն և նախաձեռնող աշակերտի և ուսուցչի համագործակցությունը դպրոցում

Անհրաժեշտ է հիշել, որ երեխաների ինքնուրույնությունը չի հերքում մանկավարժի կողմից ղեկավարումն ու վերահսկումը: Ինքնուրույնության ձևավորման մեջ կարևոր է հատկապես այն ժամանակահատվածը, երբ երեխաները նոր են սկսում յուրացնել ամենօրյա փոքրիկ պարտականությունների վերաբերյալ պահանջները՝ ինչպես պետք է վերաբերվել իրերին և առարկաներին, ինչպես շփվել շրջապատողների հետ: Գիտելիքների և ունակությունների ձևավորումն իրականանում է կենսականորեն անհրաժեշտ նմուշների դիտարկման պայմաններում՝ յուրաքանչյուր կոնկրետ փաստի, գործողության հանդեպ հետևողականության ցուցադրմամբ, պահանջի բովանդակության և դրա կատարման եղանակի մանրամասն բացատրությամբ: Այս կամ այն պահանջի ուսուցանումը պետք է իրականացվի կամ անհատական կարգով, կամ երեխաների ոչ մեծ խմբին ցուցադրելու և բացատրելու միջոցով: Ուսուցիչը աշխատանքի վերաբերյալ հուշելուց բացի պետք է այն ՝ ինքնուրույն ընտրելու շահագրգռող ուղղորդիչ հարցեր տա նրանց: Դրա համար հարկավոր է օգնել երեխաներին՝ կոնկրետացնելու աշխատանքները , որպեսզի նրանք ի զորու լինեն և վստահ լինեն, որ կարող են իրենց ուժերով կատարել դրանք: Անհրաժեշտ է նախապես մտածել աճող բարդության խնդիրների համակարգի շուրջ, որոնց լուծումը կառաջացներ ուժերի լարում , կպահանջեր գործադրել անհրաժեշտ կամային ջանքեր ՝ դժվարությունները հաղթահարելու համար: Աստիճանաբար դժվարացող խնդիրների կատարումը ամրացնում է նյարդային համակարգը, բարձրացնում կենասական ուժը, պահանջում առավելագույն ակտիվություն և համառություն: Երեխաներին պետք է նախապատրաստել աշխատանքին, տալ խորհուրդ ՝ ինչպես և ինչի համար օգնություն ցուցաբերել, հիշել, թե ինչպես է պետք կատարել առանձին գործողությունները[4]:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս

[4] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, 2014 թ.:

մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձնավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող

աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[5]:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության զարգացնող մյուս օղակը հենց սովորողն է՝ կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սակայն հատկանշական է, որ այս գիտակցումը հաճախ ժամանակավրեպ է դառնում, քանի որ կոնկրետ ժամանակահատվածում տեղի են ունենում լրջագույն բացթողումներ:

2.2. Ինչպե՞ս իրականացնել ինքնաստուգում և ինքնավերահսկում

Ի՞նչ ենք հասկանում «ինքնագնահատում»«ինքնավերահսկում» ասելով: Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու,կուտակելու,վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային,կազմակերպական արդյունքներն ի

[5] Выготский Л. С. Психология развития ребенка.

հայտ բերելու և վերահսկելու գործընթացն է,իսկ գնահատման նպատակը գիտելիքների,կարողությունների և հմտությունների ,արժեհամակարգի տիրապետման և անձնային առաջընթացի որակի վերահսկումն է: Ըստ Դ.Բ.Էլկոնինի՝ արդյունավետ ուսումնական գործունեության հիմնական առանձնահատկությունն այն է, որ աշակերտը փոխում է ինքն իրեն: Սա նշանակում է, որ դպրոցականն անտարբեր չէ իր գործունեության նկատմամբ, գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ կատարել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար,վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները, որոշում է անհաջողությունների կամ սխալների պատճառները և փորձում դրանք ուղղել: Բայց դա հնարավոր է, եթե ձևավորվում է ուսումնական գործունեություն ծավալելու աշակերտի կարողությունը, և նա դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ:

Աշակերտին սովորել են սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում զգում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման,ինքնագնահատման կարողություններ: Ուսուցիչը պետք է գնահատման որոշակի չափանիշներ, կողմնորոշիչներ ներկայացնի երեխային, որի արդյունքում նա կկարողանա գնահատել սեփական աշխատանքի արդյունքները: Խոսելով ինքնագնահատականի մասին՝ պետք է նշել, որ երեխան հիմնականում դպրոց է գալիս բարձրացված ինքնագնահատականով: Ընդհանրապես, երեխայի կողմից բարձր է գնահատվում այն աշխատանքը, որն արագ է արվում, որի վրա ինքը շատ ջանքեր է ծախսում՝ հաճախ անտեսելով ստացած արդյունքը: Ի դեպ՝ դպրոցականն ավելի քննադատաբար է մոտենում ընկերների աշխատանքին՝ բարձր արժևորելով սեփական աշխատանքը: Հարկավոր է հասնել նրան, որ երեխան գնահատի ոչ միայն իր աշխատանքի վերջնարդյունքը, այլև իր ուսումնական գործունեության ողջ գործընթացը:

Ուսումնական գործունեության կառուցվածքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վերահսկողության գործողությունը, որն ունի հատուկ գործառույթներ. այն ամրագրում է սովորողների վերաբերմունքն առարկայի նկատմամբ:Ինքնակառավարումը հոգեբանական տերմին է, որը ենթադրում է սեփական գործողություններն ու զգացմունքները կառավարելու կարողություն:

Ըստ Դ.Բ. Էլկոնինի, դա վերահսկողության գործողությունն է, որը բնութագրում է ողջ կրթական գործունեությունը որպես կամայական գործընթաց, որը վերահսկվում է հենց երեխայի կողմից: Ուսումնական գործունեության կամայականությունը որոշվում է ոչ այնքան ինչ-որ բան անելու մտադրության առկայությամբ և սովորելու ցանկությամբ, այլ մոդելին համապատասխան գործողությունների կատարման վերահսկմամբ: Այդ իսկ պատճառով ուսուցման խնդրի լուծման գործընթացում հսկողության գործողությանը տրվում է հատուկ նշանակություն:

Ուսուցման գործընթացում ինքնավերահսկում իրականացնելու տարբեր եղանակներ կան,այն է՝

1.Վերահսկում ըստ արդյունքի կամ,այսպես կոչված, վերջնական վերահսկողության (սա ինքնավերահսկման սկզբնական և ամենապարզ ձևն է, որը յուրացնում են սովորողները: Նրա գործառույթը արդյունքը տվյալ նմուշի հետ համեմատելն է, այսինքն՝ կատարվում է ստուգում: Ստուգման գործընթացում երեխաները համոզվում են, որ պատասխանը բավարարում է բոլոր նախնական պայմաններին, հակառակ դեպքում լուծումը սխալ է):

2. Քայլ առ քայլ կամ ըստ մոդելի :Այս եղանակի գործառույթը կատարվող գործողությունների ամբողջականությունը, ճշտությունը և հաջորդականությունը բացահայտելն է: Վերահսկողության այս տեսակն առաջին հերթին սովորողների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա,թե ինչպես են նրանք իրականացնում գործողությունը:

3. Նախնական (կանխատեսող) հսկողություն ՝ աշակերտին որպես գործունեության առարկա հնարավորություն է տալիս կանխատեսել դեռևս չկատարված գործողության արդյունքները: Վերահսկողության համակարգն ուղղված է սովորողների ռեֆլեքսիվ, տարբերակված, գիտակից, կայուն, համարժեք ինքնատիրապետման զարգացմանը:

Այս համակարգը կարող է բերել ցանկալի արդյունքների, եթե ուսուցիչները հետևեն անվտանգության երկու հիմնական կանոններին երեխաների ինքնավերահսկման հետ կապված[6].

[6] М. Монтессори. Помоги мне сделать это самому.

1. Նրանք անընդհատ նկատի կունենան, որ երեխաների ինքնավերահսկումն ապահով զարգանում է միայն դրական ընդհանուր վերահսկողության ամուր հիմքի վրա։
2. Զարգացնելով ինքնավերահսկման հմտությունները, ձգտելով դրանք դարձնել ավելի գիտակից, կայուն՝ մեծահասակները կկարողանան զերծ մնալ ավելորդ ոգևորությունից:

Ինքնվերահսկման ուսումնական գործունեությունը անցնում է ձևավորման մի քանի փուլով.

1. Մոտիվացիոն և ցուցիչ,
2. Գործառնական և գործադիր,
3. Վերջնական։

Մոտիվացիոն և ցուցիչ ինքնավերհսկման եղանակի դեպքում սովորողներին պետք է սովորեցնել ինքնավերահսկման և ուսումնական գործունեության ինքնագնահատման,գնահատման գործունեության զարգացում։ Գործառնական և պլանավորման ինքնավերահսկման և ինքնագնահատման ունակության ձևավորման արդյունքում դպրոցականները տիրապետում են գնահատման առարկան որոշելու և ընկալելու, սխալները վերլուծելու կարողությանը։Վերջնական արդյունքում կատարվում է կանխատեսված և ստացված արդյունքները համեմատելու հմտությունների ձևավորում, հաջողությունների և ձախողումների պատճառների վերլուծություն[7]:

2.3. Դասի պլան

1-ին Դասի Պլան - կոնսպեկտ

Երկրորդ դասարանի համար

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ - Թեմատիկ աշխատանք ,,Զարմանալի Տերևները,,

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ցույց տալ երեխաներին տարբեր, բնական տերևներ:
2. Նկարագրել կառուցվածքը,աշնանային տերևները ինչ գույներեն լինում /խառնուրդով/

[7] Ուսուցչի մեթոդական ուղեցույց, Երևան, 2010։

ԴԱՍԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ - Բնական տերևներ Ա4 ֆորմատի վրա կատարված տերևներով աշխատանք, Տերևներով պատկերված նկարներ ցուցադրելու և պատկերացում ունենալու համար և ճիշտ տեղադրելու թղտի վրա:

ԴԱՍԻ ԸՆՏԱՑՔԸ

1. Նոր դասի բացատրում:
2. Գրատախտակին նկարել տերևների օրինակներ:
3. Աշակերտի ինքնուրյուն աշխատանք:
4. Ֆիզկուլտ դադար:
5. Ուսուցչի կողմից անհատական և ընդանուր աշխատանքի դրսևորում երեխաների հետ:
6. Դասի ամփոփում՝ ցուցադրել հաջողված, հետաքրքիր կատարված աշխատանքները և գնահատել

2-րդ Դասի Պլան-կոնսպեկտի օրինակ երրորդ դասարանի համար

Դասի թեման. ,,Աշնան հյուր,, թեմատիկ նկարչություն:

Ծանոթացում կերպարվեստի Ստեղծագործությունների հետ և զրույց շրջակա գեղեցկության մասին:

Դասի նպատակը և խնդիրները.

1. Ցույց տալ երեխաներին աշնան գեղեցկությունը գեղանկարչության մեջ, նշանավոր նկարիչների ստեղծագործություններում:
2. Երեխաների կերպարային հիշողության, հուզական-գեղագիտական վերաբերմունքի հետագա զարգացում:
3. Երեխաների մեջ ձևավորել ինքնուրյուն թեմատիկ նկար ստեղծելու կարողություն, հետևողականորեն նկարել՝ ըստ ընտրած թեմայի
4. Կերպարվեստի և հարակից առարկաների միջև միջառարկայական կապերի իրականացում՝ երաժշտության ունկնդրում ,,Աշնան երգ,, բնության դիտարկում՝ մայրենի լեզվի և աշխատանքի ուսուցման դասերի թեմաների հետ կապված /աշնանային տերևներ/ :

Դասի կահավորումը. Թղթեր, մատիտներ, ջրաներկ և գուաշ, յուղամատիտներ, վրձիններ, ջրամաններ, ռետին, փորձաթղթեր, ,,Աշնանային երգ,, ձայնագրություններ, վերատպություններ և շարժանկարներ Սարյանի, Լևիտանի, Առաքելյանի նկարների վերատպություններից, հավաքածու՛ աշնանային տերևներ:

Դասի ընթացքը.

- Ա) նոր դասի բացատրություն,
- Բ) ,,Աշուն,, թեմայով երևակայական նկարչություն,
- Գ) վերատպությունների ցուցադրում և վերալուծում,
- Դ) երաժշտության ունկնդրում,
- Ե) դպրոցականների ինքնուրյուն աշխատանք՛ պատկերվող թեմայի կոմպոզիցիայի ընտրություն և գծանկարի կատարում,
- Զ) ջրաներկով կամ գուաշով աշխատելու եղանակների հիշեցում,
- Է) ներկերով և վրձինով աշխատելու վարժություններ,
- Ը) աշակերտների ինքնուրույն աշխատանք գույներով
- Թ) ուսուցիչ կողմից անհատական և ընհանուր աշխատանքի դրսևորում երեխաների հետ,
- Ժ) ուսումնական խնդրի կատարման արդյունքների ամփոփում, մանկական աշխատանքների կոլեկտիվ քննարկում:

Հետազոտությունը անցկացրել եմ 2-րդ դասարանի աշակերտների հետ:



Առաջին դասին ունեցա 35% արդյունք, իսկ 2-րդ դասին՝ դրանից ավելին: Կարծում եմ, որ հաճախ կիրառելով խաղային տեխնոլոգիաները և արդի ժամանակակից մեթոդները դասերի ժամանակ մենք կարող ենք նպաստել երեխաների ինքնուրույն գործունեության զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Դպրոցի հիմնական խնդիրն ուսումնական գործունեություն իրականացնելուն ունակ (սովորելու կարողություն ունեցող) երեխայի ձևավորումն է:Դրան հասնելու արդյունավետ ուղիներից մեկն ինքնուրույն աշխատելու կարողության ձևավորումն է:Ավելի հաճախ սովորողների ինքնուրույն աշխատանքը օգտագործվում է դասարանում վարժությունների կամ խնդիրների լուծման ժամանակ, քանի որ միայն այդպես կարելի է ամբողջ դասարանին նախապատրաստել տնային աշխատանքների արդյունավետ ու հաջող կատարմանը:

Նկատենք, որ ինքնուրույն աշխատանքի կատարմանն այդ դեպքում նախորդում է ուսուցչի կողմից նմուշային վարժությունների կամ խնդիրների լուծումը: Ինքնուրույն աշխատանքների ժամանակ ուսուցիչը չպետք է աչքաթող անի թույլ սովորողներին, ամեն կերպ ինքը կամ էլ խմբային աշխատանքի ժամանակ խմբի ուժեղ աշակերտներից մեկը պետք է աջակցի նրանց՝ կազմակերպելու վերջիններիս ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների մի շատ կարևոր ու օգտակար տեսակ է բանավոր վարժությունների լուծումը: Դրանք ունեն դիդակտիկական մեծ նշանակություն, քանի որ նպաստում են աշակերտների գիտելիքների գիտակցաբար, խորը և ամուր յուրացմանը, նրանց ինքնուրույն և ստեղծագործական մտածողության ձևավորմանը:

Ինքնուրույն աշխատանք կատարելիս մեծ նշանակություն ունի ինքնավերահսկումը,քանի որ դրա իրականացման փուլերը կարող է վերահսկել միայն ինքը՝ կատարողը:Ցանկացած աշխատանք չի կարող կատարվել առանց ինքնավերահսկման:Ինքնավերահսկողությունը սովորողները պետք է կատարեն թե տանը,թե դպրոցում:Ինքնավերահսկման հմտությունների զարգացումն անհնար է առանց այնպիսի մտավոր որակների զարգացման, ինչպիսիք են ուշադրությունը,երևակայությունը,կամքը,մտածողությունը և հիշողությունը: Ուստի դասապրոցեսի ընթացքում նպատակահարմար է օգտագործել առաջադրանքներ դրանց

ձևավորման և կատարելագործման համար։Ինքնավերահսկողությունն ուղղված է գործունեության արդյունքին և միայն աստիճանաբար զարգանում է բուն գործունեության ընթացքը վերահսկելու ունակությունը։ Ինքնավերահսկողությունը փոխում է նաև վերահսկվող գործողությունների բովանդակությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Էսիպով Բ.Պ., Սովորողների ինքնուրույն աշխատանքը դասին. - Մ., 1961։
2. Նեմով Ռ.Ս. Հոգեբանություն,Գիրք 2,1998։
3. Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010։
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, 2013թ.:
5. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, 2014 թ.:
6. Ուսուցչի մեթոդական ուղեցույց, Երևան, 2010։
7. М. Монтессори. Помоги мне сделать это самому.
8. Выготский Л. С. Психология развития ребенка.